ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Երևան 0010, Վարդանանց 13ա
Հեռ.՝ (374 10) 540 326, ֆաքս՝ (374 10) 540 603
Էլ.փոստ՝ scwe@scws.am, scws@scws.am

13a, Vardanants st., Yerevan 0010, Armenia
Tel.: (374 10) 540 326, fax: (374 10) 540 603
E -mail: scwe@scws.am, scws@scws.am,


<<30>> ապրիլի 2014թ. N 03/06/750-14

Ձեր ______________ 2014թ. N ________

**ԳԱԿ-ԾՀԱՊՁԲ-11/8 ծածկագրով ընթացակարգի շրջանակում գրանցված մասնակիցներին**

«ԳԱԿ-ԾՀԱՊՁԲ-11/8» ծածկագրով ընթացակարգի շրջանակում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքը: Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիրն է հանդիսանում ՀՀՏԿՆՋՏՊԿ- ԾՀԱՊՁԲ-11/8-14/8:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել **www.armeps.am** կայքի (այսուհետ՝ կայք) միջոցով ոչ ուշ, քան 2014 թվականի մայիսի 15-ը, ժամը 11:00-ն:

Ընթացակարգի հանձնաժողովի քարտուղարն է Արայիկ Մնացականյանը:

Հայտերը կբացվեն 2014 թվականի մայիսի 15-ին, ժամը 11:00-ին:

Գնման առարկա է հանդիսանում կոմիտեի կարիքների համար համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերումը:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

**-<<Պիտանելիության չափորոշիչ>>.**

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (**Հավելված N 1**), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

**-<<Ֆինանսական չափորոշիչ>>.**

բ. Գնային առաջարկ (**Հավելված N 1.1**): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով, ինչպես նաև մեկ միավորի գնի հաշվարկով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ԾՀԱՊՁԲ-11/8» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

***Միաժամանակ հայտնում ենք, որ «ՀՀՏԿՆՋՏՊԿ-ԾՀԱՊՁԲ-11/8-14/8» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային ձևով իրականացվող գնումների հրավերի պահանջների համաձայն՝ յուրաքանչյուր չափաբաժնի համար գնային առաջարկն անհրաժեշտ է ներկայացնել համաձայն հավելված N 1.1-ի:***

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը և մասնակցի կողմից ներկայացվելիք հայտի օրինակելի ձևը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ **scwe@scws.am**:

**Հարգանքով՝** **Մ. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ**

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ
Լ-05

Ա. Հովհաննիսյան
54-02-29